ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 310-Ա **10 հունիսի 2025 թ.**

ՎՈԼԵՅԲՈԼԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջներով

որոշում եմ՝

1. Հաստատել

1) վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 3 հավելվածի.

2. Մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ Լուսինե Վարդանյանին՝ վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի անցկացման օրերին համապատասխան հաստատություններում ապահովել մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

3. Մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Մարինե Գյարզոյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը համայնքներ, ուժային կառույցներ և բժշկական կենտրոններ:

10.06.2025

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված N1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2025 թվականի հունիսի 10-ի
N 310-Ա որոշման

ԿԱԶՄ
Վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

Զազյան Կարեն - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ /

Հարությունյան Վանիկ - մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ

Վարդանյան Լուսինե - մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Չարվադարյան Գեղամ - մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ

Շահբազյան Հասմիկ - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Վարդանյան Սևակ - ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի տնօրեն

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-06-10 16:28:51 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2025 թվականի հունիսի 10 -ի
N 310-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
Վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի

1. Նպատակն ու խնդիրները

Վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի /այսուհետ՝ մրցաշար/ անցկացման նպատակն ու խնդիրներն են՝ նպաստել

- ՀՀ Գեղարքունիքի մարզում վոլեյբոլ մարզաձևի մասսայականացմանը
- մարզի հավաքական թիմը համալրելու նպատակով, ի հայտ բերել լավագույն մարզիկներին
- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մարզական կազմակերպությունների կողմից ֆիզիկական կուլտուրայի և սպորտի- ուղղությամբ իրականացվող համագործակցված աշխատանքներին:

2. Մրցաշարի անցկացման կարգը

Մրցաշարն անցկացվում է մեկ փուլով: Մրցումների անցկացման պայմանները որոշում է մրցավարական հանձնաժողովը՝ հիմք ընդունելով վոլեյբոլի միջազգային ֆեդերացիայի կանոնակարգը. իսկ անցկացման կարգը՝ ելնելով հայտ ներկայացրած թիմերի քանակից /շրջանաձև, կիսաօլիմպիական կամ օլիմպիական համակարգով՝ երեք խաղափուլով/: Ութ և ավելի թիմերի մասնակցության դեպքում թիմերը վիճակահանությամբ կբաժանվեն ենթախմբերի և ենթախմբերում 1-ին և 2-րդ տեղեր գրաված թիմերը կպայքարեն մրցանակային տեղերի համար:

3. Մրցաշարի անցկացման վայրը և ժամկետները

Մրցումները կանցկացվեն մարզի տարբեր մարզադահլիճներում՝ 2025 թվականի հունիսի 24-27-ն ընկած ժամանակահատվածում, իսկ եզրափակիչ փուլի մրցումները՝ Գավառի Գրիշա Վահանի Ափրոյանի անվան մարրզադպրոցի մարզադահլիճում՝ 2025 թվականի հուլիսի 2-ին: Խաղերի ժամանակացույցը (կտրամադրվի լրացուցիչ) կձևավորվի հայտերի ընդունումից և վիճակահանությունից հետո:

4. Մրցաշարի մասնակիցները

Մրցաշարին մասնակցում են համայնքապետարանների, ուժային կառույցների և բժշկական կենտրոնների կողմից ձևավորված թիմերը: Թիմի կազմը՝ 10 մարզիկ և մեկ ներկայացուցիչ: Առաջնությանը թույլատրվում է մասնակցել 18 և բարձր տարիք ունեցող մարզիկներին:

5. Մրցաշարի կազմակերպումը և ղեկավարումը

Մրցաշարի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Մրցումները կազմակերպում և անցկացնում է մրցավարական հանձնաժողովը:

6.Ֆինանսական ծախսերը

Մրցաշարին մարզիկների մասնակցության ճանապարհածախսի , օրապահիկի և մարզական հագուստի հարցերը հոգում են գործուղող կազմակերպությունները:

7.Պարգևատրումը

Մրցումներում 1-3-րդ տեղերը գրաված թիմերը և մարզիկները կպարգևատրվեն դրամական պարգևներով, համապատասխան հավաստագրերով և գավաթներով:

8.Հայտերը

Մրցումների մասնակցության հայտերը ներկայացվում են ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն մինչև 2025 թվականի հունիսի 20-ը:

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-06-10 16:31:20 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված N3

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2025թ. հունիսի 10 -ի
N 310-Ա որոշման

ԿԱԶՄ

Վոլեյբոլի 2025 թվականի մարզային մրցաշարի անցկացման մրցավարական հանձնաժողովի

Սարգսյան Ստյոպա - ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց մարզիչ /գլխավոր մրցավար, համաձայնությամբ /

Վարդանյան Սևակ - ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոցի տնօրեն /մրցավար/

Մովսիսյան Հրայր – ՀՀ Գեղարքունիքի մարզային մարզադպրոց մարզիչ /մրցավար, համաձայնությամբ/

Բաղեյան Գագիկ – Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /մրցավար, համաձայնությամբ/

Ավետիսյան Գարիկ - Սևանի Ն. Դագարյանի անվան մարզադպրոցի տնօրեն / համաձայնությամբ /

Լազարյան Վահագ - Ճամբարակի մանկապատանեկան մարզադպրոցի տնօրեն /մրցավար, համաձայնությամբ/

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2025-06-10 16:30:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ 08428824

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ